ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԼԵՌՆԱՄԵՌՋ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
ОБШИНА ЛЕРНАМЕРДЗ

Գյուղ Լեռնամերձ
Արագածի 24
Հեռ 094-49-56-90
Էլ.փոստ Lernamerdz@mail.ru

Село Лернамердз
Ул, Арагаци 24
Тел, 094-49-56-90
Эл,почта lernamerdz@mail.ru

16.10.2020 թ.

N 56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Մաթևոսյան

Ձեզ է ուղարկվում Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի փոփոխված բյուջեն:

Առդիր 48 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11-20630-2020
20 10 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԼԵՌՆԱՄԵՐՁԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10-Ն

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ _2020թ Թիվ 10-Ն

ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ N20-Ն

ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի.. <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով 2020 թվականի հոկտեմբերի 5-ին թիվ 06/22487-2020 ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացության և համայնքի ղեկավարի առաջարկությունը,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 6 նիստի <<Համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 20-Ն որոշման հաստատված հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԿՈՂՄ՝ ԴԵՄ՝ ՁԵՌՆՊԱՀ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ռ. Ավդալյան
Մ. Նիկողոսյան
Ա. Ավետիսյան
Մ. Մինասյան

Համայնքի ղեկավար՝ Վ. Միրզոյան

L.S.

2020թվականի հոկտեմբերի «14»

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի
ԹԻՎ 3.ՆԻՍՏԻ N 10-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Կատարել փոփոխություններ համայնքի բյուջեի համապատասխան 2.3.4.5.6. հավելվածներում:

1. 2020թ. բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը1460.2 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար երկու հարյուր)ՀՀ դրամը ուղղել ֆոնդային բյուջե: Ընդամենը ֆոնդային բյուջե՝ 2546.4 (երկու միլիոն հինգ հարյուր քառասուն վեց հազար չորսհարյուր)ՀՀ դրամ:

2.Նախատեսված և հատատոված հոդվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 01բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4251 հոդվածից պակասացնել 1223.0հազար դրամ և ուղղել՝ հետևյալ հոդվածներին.

1.1) 450.0հազար դրամը ուղղել 01.1.1 ծրագրի 4239 հոդվածին

1.2) 23.0հազար դրամը ուղղել 01.1.1 ծրագրի 4267 հոդվածին

1.3) 750.0 հազար դրամը ուղղել 01.1.1 ծրագրի 4269 հոդվածին

1.4) 546.4 հազար դրամը ուղղել 01.1.1 ծրագրի 5122 հոդվածին

1.5) 2000.0հազար դրամը ուղղել 08.2.7 ծրագրի 5113 հոդվածին

Աշխատակազմի քարտուղար Ա. Գրիգորյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ <<ՕԳՈՍՏՈՍԻ>> << 31>> - Ի ԹԻՎ 10-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի ավագանու 2020 թվականի <<օգոստոսի>> <<31>>-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 20-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին թիվ 10-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջով ,և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ վարչական բյուջեյի տարեսկզբի ազատ մնացորդը ուղղել ֆոնդային բյուջե, առկա միջոցները համալրելու և համայնքի հուշարձանի նորոգման ծախսերը՝ հուշարձանների և մշակույթային արժեքների վերականգման և պահպանումը ֆինանսավորելու , համայնքի փողոցները գիշերային լուսավորության համար լապտերների և լարերի ծախսերը ֆինանսավորելու նպատակով, այլ կերպ ասած՝ այն ուղղված է համանքի զարգացմանը նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

Քանի որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի ավագանու 2019 թվաականի դեկտեմբերի 17-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 20-Ն որոշումը կրում է նորմատիվ իրավական բնույթ, ապա<< Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՄԻՐԶՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/22487-20

05 10 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՄԵՐՁ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի սեպտեմբերի 10-ի Մ/42266-2020 գրության՝ կից ներկայացվում է «Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Լեռնամերձ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

10/5/2020

X

Suren Galstyan

Signed by: GALSTYAN SUREN 1111911555

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Մերի Մանուկյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-082

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Լեռնամերձ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Լեռնամերձ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում անհրաժեշտ է հիշատակել որոշման կրճատ անվանումը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները:

2. Նախագծում անհրաժեշտ է պահպանել նորմատիվ իրավական ակտի վավերապայմանները, մասնավորապես՝ *ընդունող մարմնի կամ պաշտոնատար անձի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը. հերթական (գրանցման) համարը և նշում դրա բնույթի մասին, տեսակի անվանումը, ստորագրող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անվան սկզբնատառը, ազգանունը, ստորագրությունը (ստորագրությունները), ստորագրման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը:* Այս դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջներից:

3. Նախագծի վերնագրից հետո «/ԶԵԿ. ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ/» բառերն անհրաժեշտ է հանել, իսկ «Համայնքի ղեկավար՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ» բառերից հետո՝ «*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ* ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶՈՅԱՆԸ» բառերը:

4. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածին, իսկ Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածին կատարված հղումը՝ հանել:

5. Նախագծի 1-ին կետում անհրաժեշտ է հիշատակել որոշման լրիվ անվանումը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ *հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ*

կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում:

Միաժամանակ Նախագծի 1-ին կետում «հավելվածի՝ 1,2,3,4 և 5-ի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հավելվածների՝ 1,2,3,4,5» բառերով:

6. Նախագծով նախատեսվում է Լեռնամերձ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդի հաստատում և ֆոնդային բյուջեի ազատ մնացորդի հաստատում, ինչպես նաև տալ համաձայնություն 2020 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելու համար և այդ փոփոխությունների համար սահմանել 30% չափաքանակ, մինչդեռ Նախագծի վերնագրում խոսքը միայն փոփոխությունները կարարելու մասին է: Հետևաբար Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել դրա բովանդակությանը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

6. Նախագծով հաստատվող հավելվածներում անհրաժեշտ է նշել տվյալ իրավական ակտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, հերթական (գրանցման) համարը և բնույթը:

7. Նախագծին կից պետք է առկա լինի նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հիմնավորում, որով կսահմանվեն կարգավորման ենթակա ոլորտը կամ խնդիրը, առկա իրավիճակը (եթե կիրառելի է), կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը, ինչը հնարավորություն կտա լիարժեք կերպով գնահատելու նախագծով ներկայացվող կարգավորումները: Սույն դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի մասի պահանջից, այն է՝ *«Նորմատիվ իրավական ակտի նախագիծը հիմնավորման հետ մեկտեղ փորձաքննության են ուղարկում համապատասխան ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը կամ Կառավարության անդամը, ինչպես նաև Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինները»:*

Արդարադատության
Նախարարություն

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

10/2/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ